

“ՓԻՒՆԻԿ,Ի ԾՐԱԳԻՐԸ

- ՓԻՒՆԻԿ պիտի հրատարակուի ամիսն երկու անգամ, ամեն ամսոյ 1ին եւ 15ին:
- 1.—Տոհմային կեանքի հին ու նոր պատկերներ, կենսական հարցին վրայ լուրջ ուսումնասիրութիւններ. Հայոց գողթային հոսանքին վրայ շահեկան տեսչութիւններ, մասնաւորապէս Եգիպտոսի հին ու նոր գաղթականութեանց:
 - 2.—Արձակ եւ ոսանաւոր բանաստեղծութիւններ, հեղինակութիւն ու բարգմանութիւն:
 - 3.—Գիտական նորութիւններ, կէս-ժամօր ժողովրդոց կեանքէն ու բարեքն մանրամասնութիւններ, հռչակաւոր երկրախոյզներու երկերէն քաղաքացիներ:
 - 4.—Եգիպտական հնութեանց ու նորութեանց վրայ ուսումնասիրութիւններ, տեղային լուրեր, վարչային ու կրթական խնդիրներու վրայ տեսութիւններ:
 - 5.—Կիսամտեայ ընդհ. քաղաքական կայութեան վրայ հոմ ու ստիտիկ տեսչութիւններ:
 - 6.—Արտասանմանի եւ գրաւանական քրտակցութիւններ:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Եգիպտոսի համար	Տարեկան	Փր. 10
» » »	Վեցամսեայ	» 6
Արտասանմանի համար	Տարեկան	» 13
» » »	Վեցամսեայ	» 7
Կովկասի համար	Տարեկան	րուբլ. 5

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լուս կղզեք ապա զրենք. — Պ. Իրական կեանքէն (Եսկո)
 Տեսիլ. — Ս. ԲԻԻՐԱՏ Մահաբաթիւն, — Ս. Օ.
 Հակասութիւններ. — Տրթ. ՍԱՏԻՔ Լրաբաղ
 Լեռնականի մը Յուշատարբ. ՀԱՅԿ.ԼԵԻՈՆ

— ուսու —

Ձեռագիրները եւ չին դարձուիր: Կ'ընդունուին ամեն տեսակ ազդեր,
 նամակ, յարուած եւ բաժանորդագրին պէտք է զրկել առ Տիրար Ս. ԲԻԻՐԱՏ

DIRECTION DE LA REVUE ARMÉNIENNE **ՔՀԷՆԻՃ**
 INSTITUTION CENTRALE
 LE CAIRE



ԵԳԻՊՏՈՍ

ՏԱՐԵԿԱՆ... 10
ՎՅՑԱՄՍԵԱՑ 6

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆԻՈՒԿ Է



ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ՏԱՐԵԿԱՆ... 13
ՎՅՑԱՄՍԵԱՑ 7

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ՐԱՎ. 5



ՓԻԻՆԻԿ

ԿԻՍԱՄՍԵԱՑ ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՍՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

1 ՕԿՏՈՍՏՈՍ 1899

ԹԻԻ 9

ԼԱԻ ԿՅՈՒՆՆԵՔ ԱՊԱ ԳՐԵՆՆԵՔ

Ողջամտութիւնը ո՛չ թէ ըստ հիմնոյս հաստատելու, այլ ճշմարիտը սուտէն զանազանելու կարողութեամբ միայն կ'ապացուցուի:

ՍՈՒԷՏԷՆՊՕՐԿ

Մէկէ աւելի պատճառներու համար խիստ հրահանգիչ կը գտնեմ «կրօնք և ազգասիրութիւն» վերնագրեալ յօդուածը: Հեղինակը՝ պատուելի Գնաճեան՝ կը բողոքէ իմ մի գրութեանս պարունակած մի ակնբերու ճշմարտութեան դէմ: Սակայն չեմ գիտեր թէ զրաժս իրօք չէ հասկըցած, թէ այնպէս կը ձևացնէ...

Բայց ես ամենայն պարզմտութեամբ հաւատալով իմ համակրելի ընդդիմախօսին անկեղծութեան, և քաջալերուելով այն պատիւէն զոր ինձ կ'ընէ ո՛չ միայն իմ զրաժս հերքելով, այլ նաև իմ պատճառաւ քրիստոնէութիւն քարոզելով Փիւնիկի ընթերցողաց, նախ զինք համոզելու պիտի ջանամ և յետոյ պիտի աշխատիմ վերլուծել իր գրութեան այլ ամսերը: Միայն ներսդամութիւնը

կը խնդրեմ ընթերցողաց եթէ խօսքս մի քիչ երկարի. վասնզի յայտնի է արդէն որ ամեն բողոքական աւետարանիչ է ի պաշտօնէ, և կրօնական խնդիրներու հմուտ, ինչ որ պարտականութիւն մ'է ամեն հաւատացեալի համար: Խնդիրն աւելի կը կնճառտի մանաւանդ երբ տղէտ աշխարհակոնի մը առջև կը կանգնի մի անուանի պատուելի, քաջամարզ այս տեսակ բանակաւորներու մէջ:

Ես ըսած էի. «Ազգ մը կազմող անհասներուն կրօնքի կամ դաւանանքի պէսպիսութիւնը կը վնասէ այն ազգին բարգաւաճման»: Պատուելին պարզապէս կը մերժէ իմ այս ըմբռնումը, և փոխանակ հակառակը ապացուցանելու՝ իր կրօնքին, կամ աւելի ճիշդը իր դաւանանքին շատազովութեան կը ձեռնարկէ. բան մը որ նիւթէն զուրս է, և որուն վրայ ետքը պիտի խօսուի:

Մեծայարգ ընդդիմախօսս անշուշտ գիտէ որ ազգ մը բազմաթիւ ընտանիքներէ կազմուած ընկերութիւն մ'է և հետեաբար մէն մի ընտանիք ազգին մէկ անդամն է, ճիշդ ինչպէս մեր մարմինը կազմող անդամները: Եւ ինչպէս որ մարմնոյն անդամներուն միոյն վնասուելովը, կամ ընդհանուր մղումին չհնազանդելովը ամ-

բող մարմինը կը վնասուի, կը հիւանդանայ և կը տկարանայ, նոյնպէս այլ ազգին ամբողջութիւնը կազմող անդամներուն — ընտանեաց — միոյն վնասուելովը (թէ նիւթապէս, թէ՛ բարոյապէս) ի բաց խլուելովը այդ ամբողջութիւնը կը հաշմի, կը տկարանայ: Հոգ չէ թէ մարմինը կամ ազգը ըլլայ Անկլո-Սաքսոնի, Հնդկի կամ Պարսկի: Կրօնքին ճշմարտութիւնը կամ ստուգութիւնը, ժողովրդականութիւնը կամ բահանայալարութիւնը գործ չունին հոս:

Եւ եթէ կրօնափոխները չեն կտրսընցներ իրենց ազգութիւնը, Պ. Գրնաճեան թող հաճի մեզի ըսել թէ ո՛ւր մնացին այն հազարաւոր և բիւրաւոր հայ ընտանիքներ, որոնք այլ և այլ ժամանակներ Հայաստանէն գաղթեցին կամ գերուեցան աշխարհիս չորս կողմերը: Ո՛ւր մնացին Պարսկաստան տարուողները, ո՛ւր մնացին մահմէտականութիւնն ընդունողները, ո՛ւր մնացին լեհաստան, Հունգարիա, Ֆրանսա քաջուած հայերը: Կրնա՞նք ըսել թէ անոնց ամենն ալ մեռան, կորան առանց սերունդ մը ձգելու. կամ ո՛վ կրնայ ապացուցանել որ ամեն այս գաղթականութիւնք, գերեզմանութիւնք անհիմն առասպելներ են, և թէ Հայոց ազգը երբէք այժմեայ թիւէն բարձր թուոյ մը հասած չէ:

Մարդ ի՞նչ կը շահի անժխտելի ճշմարտութիւններն ուրանալով:

Ո՛վ չգիտեր սա առածը. «Ո՛ւր միութիւն. հոն զօրութիւն»: Արդ միթէ միութիւնը խոյս չպիտի տայ այն ազգէն, որուն անդամները ենթադրելով որ բոլորոյին չկորսնցնեն իրենց ազգութեան անունն իսկ — հերձուածող, հերետիկոս, «փտած, նեխած վարդապետութեանց հեռեւ» և այլն մակղիրները պիտի տան իրաբու: Զօրութիւնը ինչպէս գոյութիւն կըրնայ ունենալ այնպիսի ժողովոյ մը մէջ, որուն նախագահը ի հարկէ անհաւաստ մը պիտի ըլլայ ժողովրդեան

մէկ մասին համար:

Միթէ Պօլոս Առաքեալ ըսած չէ՞ առ Տիմոթէոս թղթոյն մէջ, «Հեռու կեցէք անհաւատներէն»: Ռուտի եթէ բողոքականք՝ իբր ճշմարիտ քրիստոնեայք՝ հեռու կենան լուսաւորչականներէ, գաւանանքի տարբերութիւնը զլսովին կատարած պիտի ըլլայ իր դերը. իսկ եթէ միանան լուսաւորչականներու հետ, այն ատեն անուամբ միայն հաւատացեալ պիտի ըլլան. ինչ որ կեղծաւորութիւն մ'է:

Մասնակի կրօնափոխութեանց ազդի մը մէջ պատճառովիք աւերումներու մի փոքր պատկերը դիւրաւ աչքի առջև կ'ունենայ մարդ, եթէ երեւակայէ ընտանիք մը՝ չորս հինգ անձէ բաղկացեալ որոնց մին լուսաւորչական ըլլայ, երկրորդը բողոքականութիւնն ընդունի, երրորդը Հռովմայ գիրկն իյնայ, չորրորդը Մուհամմէտին փարի և հինգերորդը բարունապետին դիմէ: Եթէ այն ընտանիքը չտկարանալով ընդհակառակն աճի, բաղմանայ և զօրանայ, և այդ անձինք և անոնց սերունդները իրարու հաշտ աչօք նային և սիրալիր վարմունքներ ունենան, այն ատեն բաղմակիցն ազգ մ'ալ չտկարանար, այլ կը զօրանայ:

Յիշեցէ՛ք, Պ. Գրնաճեան, սա ստուածային վճիռը. «Ամենայն թաղաւորութիւն բաժանեալ յանձն իւր՝ աւերի. և ամենայն քաղաք կամ տուն բաժանեալ յանձն իւր՝ ոչ կացցէ:» Մատթ. ԺԲ. 25:

Վճիռը, որուն վրայ յենելով ըսած էի թէ «կրօնքի կամ գաւանանքի պէսպիսութիւնը կը վնասէ ազգի մը բարգաւաճման:»

Նոյն իսկ բողոքականութիւնը զոր կը ներկայէք իբր մի կենդանարար զօրութիւն, կարող չպիտի ըլլայ ազդի մը կործանումը արգիլել եթէ Աւետարանի խօսքերէն աւելի բաժակաճառերու առթիւ վեհապետներու — մանաւանդ բողոքական վեհապետներու — խօսքերուն Կարեւորութիւն տուող լուսաւորեալ անդամներէ միայն բաղ-

կանայ: Գերմանիոյ կայսրը « բարի քրիստոնեայ չ'եղող անձ մը ճշմարիտ ազգասէր չ'իրենք ըլլալ » ըսած ատենը, (եթէ երբէջ արտաբերած է այսպիսի անհիշելի բառեր), քթին տակէն խնդացած ըլլալու է անշուշտ, կա՛մ իր ունկնդիրները իբր անարգ անգլաներ նկատելով, կա՛մ վերջերս Գամասիոսի մէջ Յուլիան Սալատոսի տինի վրայ ըսածը միտքը բերելով: Սրբարեւ միթէ կարելի է լրջօրէն խորհիլ և ընդունիլ այսպիսի անարգական խօսքեր, երբ ամենայնոք զիւրին նախակրթարաններուն մէջ անգամ կը յեղեղուին հին և նոր զիւցազանց փառապանծ անունները: Բայց խնդիր է գիտնալ թէ ինչո՞ւ մեծայարգ Պատուելին իբր բնաբան կը գործածէ վիլհելմ Բ.ի յիշեալ արատուոց խօսքերը: Երնամ'նք ըսել արդիւնք արգիտութեան: Ո՛չ, սրովհետեւ Պ. Գրնանեան ինքն իսկ վերապահումով կ'ընդունի այդ տարօրինակ գազափարը. թէև քանի մը ասոյ վար այդ վերապահումն ալ յօգս կը ցնդի: Ռարեմն, կա՛յ մի թագուն նպատակ: — Ճիշդ, այ՛ն. և ո՞րն է այդ: Այս հարցման պատասխանը գտնելու համար անգամ մ'ալ աչքէ անցուցէ՛ք կայսեր խօսքերը, և յետոյ սա հարցումը ուղղեցէ՛ք դուք ձեզի: « Ինչ է ազգասիրութեան առաջին պայմանը: » Քրիստոնեութիւն, — կը պատասխանէ, Պ. Գրնանեան, — սրուն հիմնադիրն ինք շերմեռանդ ազգասէր մ'էր (!!!) » գործեալ հարցում: « Կա՛յ ճշմարիտ քրիստոնեութիւն աշխարհիս վրայ: » « — Անշուշտ, կը պատասխանէ պատուելիին յօրումը ծայրէ ի ծայր, բողոքականութիւն: » Եւ հիմայ ապահովաբար կրնանք եզրակացնել թէ ճշմարիտ ազգասէր ըլլալու համար, պէտք է ըլլալ բարի քրիստոնեայ. և բարի քրիստոնեայ ըլլալու համար պէտք է ըլլալ բողոքական: Ահա նպատակակէտը: Որ ունիցի ականջս լսելոյ լուիցէ:

Մարդ կ'սքանչանայ երբ այսպիսի

անակնկալ զիւտերու առջև կը տեսնէ ինքզինք. զարավերջիկ բողոքականութեան պատկառելի ներկայացուցիչներն են որ դարերը շրջապատող թանճրահոծ խաւարը կը փարատեն մեզի յայտնապէս ցուցնելու համար որ՝ մէկզի թողլով օտար և արդի զիւցազունքը՝ մեր Հայկեր, Արամներ, Տիգրաններ, Վահաններ, Վարդաններ, Սմբատներ, Գաղիկներ, Լեւոններ, Էն. Էն., զորս գիտակցօրէն կը պաշտենք ազգասիրութեան իբրև վեհաշուք տիպարներ, չ'են այլ ինչ բայց միայն պարզ գաճաճներ՝ անարժան մի որ և է յիշատակի: Եւ ինչո՞ւ: Վասն զի պատիւ չ'ունէին անքամներ ըլլալու այն յարանուանութեան, որ գոյութիւն չ'ունէր իրենց ժամանակը:

Խիստ լրջօրէն կը խօսի պատուելին երբ մեզի կ'իմացնէ թէ մի քանի տասնեակ հովիւ և բոօֆէսէօրներ տառապեցան ազգին սիրոյն համար: Առ այս կը պատասխանենք որ մենք ալ կը ճանչնանք մի քանի տասնեակ Հայ-Հռովմէականներ աշխարհական և եկեղեցական, սրտնք եւմանապէս հալածուեցան, սպաննուեցան Էն. բայց այս եղելութիւնք բան մը չ'են սպառնացաներ. միայն կը շեշտեն այն ճշմարտութիւնը որ ամեն կանոն իր բացառութիւնն ունի: Մենք երբէք չ'ենք խորհած և հաստատած որ լուսաւորչական Հայոց ամենն ալ ճշմարիտ ազգասէր, և բողոքական կա՛մ Հռովմէական Հայոց ամենն ալ անտարբեր են: Որքան ճշմարիտ և ուրախատիլի է այս յարանուանութեանց մէջ ճշմարիտ հայերու գտնուիլը, այնքան ճշմարիտ է և ցուալի առաջիններու մէջ կեղծ հայերու գոյութիւնը: Եմանապէս բացառութիւն մը կը կազմեն այն միսիօնարք սրտնք « իրենց կառավարութեան ընդդիմութեան հակառակ՝ անձնուիրաբար իրենց գործը շարունակելու ճգնած են օտար երկիրներու մէջ: » Ո՛չ ոք կրնայ ուրանալ թէ կը գտնուին այնպիսի անկեղծ և խղճամիտ անձինք, սրտնք

առաջադրեալ բարեգործութեան մը սիրոյն համար մէկդի կը թողուն եսասիրական ամեն տեսակ նկատմունք: Մեծամասնութեան նայինք, սիրելիս, մեծամասնութեան:

Եւ դարձեալ յարգամեծար Պատուելին այնքան համոզուած է բողոքականութեան կատարած սքանչելեաց վրայ, որ հիացմամբ «Տեսէք, կըզոչէ, ինչ մեծ է Անկլո-Սաքսոն և Լատին ազգաց միջև եղած սարբերութիւնը, առաջինը բողոքականութեան կենդարանար մթնոլորտին մէջ կը յառաջանայ հսկայ քայլերով. մինչդեռ երկրորդը քահանայավարական ստրկացուցիչ լուծին տակ կը հեծէ, և այն ազգերէն ոմանք՝ ինչպէս Սպանիացիք մահամերձ վիճակի մը մէջ կը գտնուին այսօր:» (ակնարկութիւն այս վերջնոց կենդարանար բողոքական Սմերեկացիներէն կրած պարտութեան): Ուստի կը շարունակէ, յօղուածագիրը իւրովի, եթէ դուք ալ Լուսաւորչակա՛նք՝ չէք ուզեր մեռնիլ, կորսուիլ, առանց ուշանալու մտէ՛ք հովանւոյն տակ բողոքականութեան որ, կը շեշտէ բարձրաձայն, պաշտօն ունի Աւետարանին զուտ և կենսական ճշմարտութիւններուն վրայ հաւարուած անպիտան և վրասակար աւերորդապաշտութիւնները յօտել և ժողովուրդները յետս կոչել կենաց ջուրին հարապատաշբերակին» ելն. ելն. : Բայց թէ որո՞նք են այդ «աւերորդապաշտութիւնները», այդ «իտա՛ծ նեխած կամայական վարդապետութիւնները» չճշդեր. այլ կ'ուզէ որ մի միայն իր խօսքին վստահելով՝ ընդունինք եղած առաջարկութիւնները:

Սակայն մէն մի Լուսաւորչական՝ որոշում մը չ'տուած պարտ անձին համարելու է քննել թէ ո՛ր աստիճան ստուգութիւն կայ Պ. Գրնաճեանի կողմէն՝ ի նպատակ բողոքականութեան մէջ բերուած փաստերուն մէջ:

Կրնայ ըլլալ որ Սպանիան մեռնի, բայց աշխարհիս պատմութեան քիչ շատ տեղեակները ինձ իրաւունք պիտի

տան երբ ըսեմ թէ երկրիս վրայ ուրոյն ազգութիւններ կազմուելէն իվեր զանազան ողզք և ազինք երևան եկած մեծցած զօրացած և յետոյ տկարացած և անհետացած են: Մ'վ կրնայ գտնել հետքը Եգիպտացւոց, Փիւնիկեցոց, Ասորւոց, Քողզէացւոց, Բաբելացւոց, Մակեդոնացւոց, Հռովմայեցւոց ևլն.: Մի՛թէասոնց ամենքն ալ կորան այն պատճառաւ որ բողոքական չ'էին: Ո՛չ, այլ զօրութեան մ' ազդեցութեամբ, որուն գաղտնիքը Արարիչը միայն գիտէ: Եւ միթէ այժմեայ հզօր Անկլո-Սաքսոն ազգը բողոքական չ'էր մօտաւորապէս զարմ' առաջ, և սակայն Լատին ազգը զայն կը յաղթահարէր և կը հալածէր ամեն ուրեր: Լատին ազգաց տկարութեան իբրևօրինակ տարաբաղդ Պպանիան յառաջ բերուելէն ետքը անկողմնակալութիւնը կը պահանջէր որ բողոքական և Անկլո-Սաքսոն Տանիմաբքայի, Շուէտի, Հոլանտայի անկարողութեանց պատճառն ալ բացատրուէր: Ազգերու իրարու յաջորդելը, ինչպէս ըրինք, ըստ Մ. Գրոց, նախաինամական մի գործողութիւն ըլլալէն զատ անժխտելի փաստ մ'է որ ազգերն ալ ենթակայ են բնական օրինաց, ըստ որում ամեն ծնող պիտի մեռնի: Լահէյի վեհաժողովին առթիւ խօսելով՝ չեմ՝ յիշեր որ՝ դիւանագէտ ըսած էր որ անցեալը Լատինաց էր, ներկայն Անկլո-Սաքսոններու է, իսկ ապագան Սլաւներուն պիտի ըլլայ:

Արդոյ պատուելին ամեն տեսակ ազատութեան, յառաջդիմութեան և հնարաւորապէս՝ կատարելութեան օրոք զառ ռոտը կը ճգնի պատկերել բողոքականութեան մէջ, և՛ իբր փաստ՝ մեր առջև կը պարզէ եւրօպական ազգաց նախամեծելի վիճակը: Արդ, մենք զիտենք որ միմիայն բողոքականներէ գրաւուած չէ երկրագնտիս այդ մասը: Սակայն առանց այս հակասութեան վրայ ծանրանալու, հակառակը ենթադրենք պահ մը և ամենայն անկեղծութեամբ խոստովանելով հանդերձ թէ արդարև մենք

չտա բան կը պարտինք եւրոպական ազգաց, եթէ Անկլո-Սաքսոնն և լատին ազգաց կրօնէն ընդհանուր կերպով համայն աշխարհի և մասնաւոր կերպով Հայոցն մատուցուած ծառայութիւնները բողոքականք, խիստ տարակուսելի է որ առաւելութիւնն առաջիններուն մեայ: Արգեօք պատուելին կ'անգիտէ զայս: Չենք կարծեր: Պահ մը զայդ ալ ընդունինք և ըսենք. եթէ կրօնքի և դասնանքի ճշմարտութիւնը կ'ապացուցուի միմիայն այն յառաջգիտական և ազատասէր ոգով զոր կրօնքը կը ներշնչէ իր հետևողներուն, ուրեմն ի՞նչ իրաւամբ քարկոծել Հռոմէականութիւնը, որ է պաշտօնական կրօնք Ֆրանսայի և իտալիայի, լուսաւորչականութիւնը որ հակառակ միշտ ճնշման տակ և շղթայակապ գտնուելուն՝ ազատութեան ոգով մրցող հերոսներ արտադրելէ չէ դադարած. օրթոտօքսութիւնը՝ որ կրէտէի դուցազունքը թելագրեց և Պուլկարիան ազատեց: Բայց ի՞նչ հարկ երէկուանը յիշել, այսօր այս բողոքիս տեղի ունեցող դէպքերը կը բաւեն Պ. Գրնաճեանի յաւակնութիւնքը վեր ի վայր չըջելու: Տեսէք Ֆելիպին կղզիները. զոհերն են պատգամք, ուրեք կ'ուզեն ազատ ապրիլ և ազատ մեռնիլ իրենց նախահարց հողին վրայ. իսկ գահիճը ո՞վ է...:

Դիտողութիւններէն չ'կարծուի որ « Կախանձուս — պահպանողականութեան » շերտ՝ կուսակից եմ՝ կրօնքի մասին, և անհաշտ թշնամի ժողովրդական կրօնքի. ընդհակառակը: Բայց ես ո՛չ լուսաւորչական եկեղեցւոյ մէջ կը տեսնեմ այն թերութիւնքը ո՛չ ալ պատուելի Գրնաճեանի բողոքականութեան մէջ կը գտնեմ՝ այն կատարելութիւնքը զոր Պ. յօդուածագիրը կը թուէ: Արդարև, եթէ լուսաւորչական եկեղեցին ընդունած է « կամայական վարդապետութիւններ » բողոքականութիւնն վար չ'մնար այդ կողմէ: Ուրեմն ինչո՞ւ ձգել հինը և

նորին յարիլ: Հինը՝ իր ամեն թերութեամբ հանդերձ՝ եթէ ունի, ազնայի դարերու զիմադրած և մեզ մինչև այս օրերս հասուցած է. ընդհակառակը պէտք է երախտագիտական սիրով գրկենք և պաշտպանենք այն վաղեմի առաքելական եկեղեցին, միակ հարազատ և միակ ազատն աշխարհիս եկեղեցեաց մէջ: Իսկ եթէ կայ մեզի անձանօթ հիմնական ճշմարտութիւն մը, թո՛ղ պատուելին հաճի յայտնել և քննել. վասնզի ճշմարտութիւնը միայն և գիտութիւնը կրնան առլ մարդկութեան այն ազատութիւնը և այն բարեմասնութիւնքը զոր ընդգիմախօս՝ կը կարծէ տեսնել բողոքականութեան մէջ անձնաւորեալ:

Մի քանի խօսք ևս:
Արդիւնք անուշադրութեան ըսենք թէ հմտութեան այլազանութիւն. ընթերցողը թո՛ղ գատէ: Մտիկ ըրէք ուրեմն պատուելի Գրնաճեանի. Աստուածաբանութեան նմոյշ մ'է զոր պիտի լսէք. « կրօնքը որուն գերն է ազնիւ և բարոյական նկարագիր պտտրաստել, անուղղապէս ազգասիրութեան ոգին կ'արծարծէ իր հպատակներուն սրտին մէջ: Այս ճշմարիտ է մանաւանդ քրիստոնէական կրօնքին նկատմամբ որուն հիմնադիրն ինք շերտեանդ ազգասէր մ'էր »: Եւ քիչ մը վար. « Ազգ և կրօնք թէև իրարմէ տարբեր ուրոյն հաստատութիւններ, իրարու լրացուցիչներն են: Առաջինը մարդու բնական և ընկերական վիճակէն առաջ եկած, իսկ երկրորդը Աստուծմէ արուած և յայտնութեան վրայ հաստատուած է »:

Ո՞վ երբէք լսած է այսպիսի անհեթեթ, այլանդակ, հակաքրիստոնէայ, հակաստուածային խօսքեր: Խեղճ վօլթէր, խեղճ Ռընան, գուք ձեր անհաւատութեամբն հանդերձ այս աստիճանի հասած չէիք. ամօթ ձեզի:

Սհա մեր պատասխանը.
Ա. Ազգութիւնը՝ ըլլալով մարդ-

կային գրութիւն, և կրօնքը աստուածային, երկուքն ալ երեսն հեղինակաց հանգամանքն ունենալու են. յեղյեզուկ և անկատար, կամ անփոփոխ և կատարեալ: Արդ անկատարը երբէք կատարեալին լրացուցիչը չի կրնար ըլլալ: Ուրիշ խօսքով, աստուածային մի հաստատութիւն արդէն ինքնին կատարեալ ըլլալով իբրև իր հեղինակը, մարդկային հնարից և ճարտարութեանց կարօտ չէ կատարելագործուելու համար:

Բ. Քրիստոնէութեան հիմնադիրը որ է Քրիստոս, ազգասէր չէր և չէր կրնար ըլլալ: Նախ վասնզի ազգասիրութիւնը իբր արդիւնք ազգութեան, որ է մարդկային հաստատութիւն, իր մէջ կը պարունակէ անսահման ճանճաստութիւն. մինչդեռ Քրիստոսի պաշտօնը կը պահանջէր բացարձակ անձնաւարացոյթիւն: **Գ.** զիսենք որ Քրիստոս աշխարհ եկաւ զԱստուած քարոզելու և աստուածպաշտութեան եղանակը ուսուցանելու համարի աշխարհի. **Գ.** զիսենք նաև որ քրիստոնէական կրօնքը ամփոփուած է Տաճարանեային մէջ, ինչպէս այս վերջինը ամփոփուած է Յիսուսի հետեւեալ խօսքերուն մէջ. «Միրեսցես զՏէր Աստուած քո յասննայն սրտէ քումնէ և յամենայն անձնէ քումնէ և յամենայն զօրութեանէ քումնէ և յամենայն մասց քոց և զընկեր քո իբրև զանձն քո»:

Եւ հիմայ կը հարցնեն՝ մեծայարգ Պատուելիին թէ՛ Տաճարանեային և թէ՛ Քրիստոսի խօսքերուն ս'ը մասին մէջ ազգասիրութեան համապատասխանող բառ ս'ը, կէտ մը կը տեսնէ: Մեր սիրտը վարդապետութիւնը անլի աստուածաժայել անուամբ կը զովորանէ փրկիչը զայն ՄԱՐԿՍ՝ ԱՒԻ կոչելով:

Ահ, սիրելի Ընդդիմաբոսս, եթէ օրհնել չէք զիսեր, գէթ մի՛ հայհայէք: Զգեցէ՛ք որ մենք մեր Աստուածը պաշտենք իբրև Աստուած, և ո՛չ թէ իբրև մի Գիւցազն. կռապաշտու-

թեան դարն անցա՛ւ:

Պատուելի Գլուխեան Մայր Եկեղեցոյ մը խօսքը կ'ընէ իր յօդուածին մէջ. արդ'օք կը հաճի՞ մեզ մի քիչ աւելի ճշդել այդ Եկեղեցին, որ պէտքի կարող ըլլանք քննել եղած ակնարկութիւնները:

Պ.

Տ Ե Ս Ի Լ

« Զարթի՛ր, մոժղէ՛մ կալանաւոր, օն, զարթի՛ր, Աւուտու լին մը լազաց ունկնդիր. Բարբառ հմէնաց յուկն իմ, բարբառ ան-

ծանօթ.

Զարթնայ ըմդոստ, աչք իմ տեսին ըմդ ա-

դոս...:

Զի՞մչ այս, ո՛վ Տէր, տեսիլքնաղ, հրաշա-

ղան.

Ի բիւր՛ղափայլ, հայելատիպ աւազան խորասուզեալ իմն հայէի: Տեսիլն այն՝ Գեղ, հոգի, բոյր, հրապոյր, համբո՛յր էլ համայն.

Կերպարանն էր ամբիծ կուսի: Գեղաթուխ Գէսք ծուխ ի ծուխ ծածանէին ի գըլուխ, Ըղծիւմաթոյր դիմօք զըծեալ շրջանակ, Իբր ըղցայգոյ դշխոյն՝ յամպոց պարունակ. Գըլուխն համակ թագապրսակ յաստեղաց. Ճակասն՝ աթոռ արեգակն հրատեղաց. Աչկուկն ակուկն վառ ի գոհար երկնային, Ուստի գորով աղապատանք ցոլային. Այտքըն հրալառ երփնեալ յասմիկ և ի վարդ, — Խորհրդանիշ՝ մատաղ տիոցն յարագուարթ —

Բըխէին կեանք ի բերանոյն ուր վընիտ Շարք մարգարտաց համապարհն ըզժըպիտ. Մեղրածորան և բացընդիկ իւր շրթուկն, Էին սըրոյ անմահութեան երկփեղկ դըրուկն. Նըբէին դիտակն և մայրանալ ծըզէր յիցք Զաչս և ըզսիրտ: Ի նա երկիր և երկինք Յապուշ հարեալ՝ բեւեռէին ըրհայնաց Եւ ասէին. « Տէր, ի ձեռաց կերտղ հայ-կաց... »:

Կայի դէտքն և անա մոր տեսարան. Ո՛չ ևս էր կոյս, այլ անապատ, գերեզման. Համատարած տիրէր խաւար թանձրասու ուեր, Ուր առ խարխափ խըլըրտէին անդ յերեր,

Շիրմաշըրջիկ ուրուականաց երամակ :
Վա՛յր ամառի : զորով պատէր մահ համակ .
Ձուկն իմ հեռուստ հարկանէիմ հեծեծամք
Ձերդ խոցելոց , յարոյ հրաժեշտ տայցեն
կեանք .

Ձարհուրազինս տատուէր այն բացալայր .
Ողջ անապատն՝ տլե՛րծիլ ծով ծըվայր :
Անդէր հեղուսն ուխիւնսս յորդ արեան ,
Ո՛րկէն եղևն ըստէպ՛ի խազմս հնադարեան .
Ծովք անաբեկ դարձան յարիւն և յափանց
Ընկրկեցան : Պատեաց Գիշեր անթափանց .
Անդ ի ստուերի նշմարէի շեշջակոյս
Ձինուց , գահից խորտակելոց և պլտոյս
Կերպարանաց խաթարելոց , եղծելոց ,
Մուկեմելոց ուզոց ի մուսնէ մշտակոծ . . . :
Անդէն և անդ եկաց աչացս յանդիման ,
Լուսազարմիկ զուարթուն իմ կոյսն աներ-

ման .
Խո՛յս նտ խաւար , զի ծագեաց Մայրըն-

դուսան ,

Շիրիմք ըզհետ յորա զգնալ ըսկըսան .
Շուրջ ըզմովաւ կըրճըտումն էր ատամանց
Բընակչաց շիրմաց սասանելոց ի հիմանց :
Գողումն յերակս իմ ընթացաւ և սարսուռ ,
Ձաչս իմ մկողեալս յառեալ ի մա , կայի
լուռ . . . :

Պատմուհանն էր նորա կապոյտ թափանցիկ ,
Ընդ որ՝ իբրև ընդ հայելի ցոլացիկ՝
Երևէին կրկին գնտակք յորոց Սէր
Ընդ լուսատարը իմըն կաթին կեանս հոսէր .
Ի ստեանց ի կախ անտի կոյսին երկուորեակ
Մանկունք որոց ջա՛հէր ըզլա՛՞մն յնդրոսլ .
Ձիրանն ըզզիրգ ծածկէին բիւր բիւրուց
վէրջ ,

Կայլակս արեան զայտէին բաց իւր կողերք .
Ընդ այս անսիլ նըւաղեցայ և ի սուգ
Մածեալ յաչացս հոսեցան դառն արտա-

սուք .

Ի զայրացեալ ոգւոյս խորոց՝ սրտաբեկ
Ել աղաղակ . «Ըստուերք , ազատ զիս թողէ՛ք ,
«Թողէ՛ք , չ՛իցե՞մ հերիք թախիծք եղկելույս ,
«Հեռի՛ , հեռի՛ յակամողեցաս՝ տըշալոյս .
«Ի ստեանց բաժին վիճակեցաւ ինձ աղէտ ,
«Յորմէ անզերծ լիցի անձն իմ առ յաւէտ :
«Գիշեր , դո՛ւ լեր մեծացելոյս ինձ ընկեր ,
«Եւ դու , Ձընդան , ինձ յօթեան մահաատուեր .
«Խոյս տուր , տեսիլդ իմ դիւթական , մի՛
խոտվեր ,
«Ձոգիս անյոյս տարազրելոյս կարեվեր . . . :
«Այլ ո՛վ հրաշլիցս անհղից և անճառից ,

«Խորհուրդ խորին , ո՛րպէս ըզքեզ պարզե-

ցից .
«Կոյսն ըստմտու՛ւ , երկուորեկի Մայր ծընող ,
«Յանհմարի՛ց է . Աստուած իմ , զե՛րծ ինձ

ըզքող ,

«Ո՛հ թէ՛ զոյր մարթ ինձ մերժելոյ զտա-

րակոյս ,
«Որ տագնապէ զմիտս իմ , զըթա յիս , ո՛

կոյս . . . » :

Մինչ գեանա Լոճ անկեալ յաղերս այսգու-

նակ ,
Հառաչէի համդէպ կուսին սիրուեակ ,
Ահա՛ մերձեալ առ իս , ասէ . «Օ՛ն , արի՛ ,

«Ոգիմ եմ ես Ազատութեան քաջարի ,
«Լո՛ւր ինձ , որդի՛դ լերայց . տես՛ս զայս երկ-

ուորեակ
«Ձիմ ըզմանկունս , անտիական հրեղինակ .
«Ձայսոսիկ ե՛ս ծընայ ի կոյս արգանդէս ,

«Ըզգիտութիւն , ըզկրօն . ածեալ ի հոսնդէս ,
«Անխարար ծըծեն ըզմոյս յիմէն կաթ

«Յարածորան , ըզՍէր , ըզՅոյս , ըզՀաւատ .
«Տեսանե՞ս շիթս արեան ըլբիւր մարմնոյս

վէրս .
«Տըգէտ և կոյր խաժամըժոյն ըզմըւէրս ,
«Հայեա՛ց ըզքև , ո՛րպէս խաւար և աւեր ,

«Անդաճօր մահ՛ կարդայ կենաց հըրաւէր .
«Լըսե՞ս ըզձայն հառաչանաց ի հեռուստ ,

«Խո՛ց վերագացն է մատնելոց ի կորուստ .
«Տեսանե՞ս զայդ բիրտ բընակիչըս շիրմաց

«Ոյց տատմունք կըճտեն և դէմք՝ միգամած ,
«Բռնակալք եմ դոքս պատեալք ի զինուց

«Եւ ի գահից խորտակելոց ի վաղուց .
«Ձարթի՛ր , նիժդէհ կալանաւոր , օ՛ն , զարթի՛ր ,

«Առաւօտու լեր նըւագաց ունկնդիր . . . » :

Թըլի լըսել դեռ ինձ ըզմոյս բարբառ շուրջ ,
Սիրեցի յոյժ և պաշտեցի զայս անուրջ .

Ի բաց կացէ՛ք յիմէն զընորք դառնութեան ,
Կեցից ըզկեանս ազատութեան յաւիտեան :

29/9/99
Ս . ԲԻԻՐԱՏ

ՀԱՎԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուրեմն տիեզերական անբանութեան մէջտեղ ի՛նչպէս կարելի է գաղափար մը կազմել :

Հարցում մը թէ՛ պարզ և թէ՛ բարդ : Պարզ , բրովհետեւ կը բաւէ ի գործ դնել կարողութիւնները , գործ բնութիւնը մեր տրամադրութեան առակ

տարեւազարժուել, արժանի ըլլալու համար իր սիրականին. հաղարուձէկ գաղտնի զոհոյութիւններ քնել անոր. հեռուէն պաշտել զանի, կաթիլ կաթիլ անոր արիւնք տալ, անոր զօհել իր անձնուիրութիւնը, ա՛լ չունենալ հաղարուձիւն ո՛չ ալ բարկութիւն անոր հետ, մինչև իսկ վայրագ նախանձուութեանց ծանօթութիւնը ծածկել անկէ. սալ անոր ամեն ինչ որ կը բողձայ. նոյն իսկ ի քիսս մեր՝ սիրել ինչ որ կը սիրէ, երեսը միշտ գէպ ի նա դարձուցած ըլլալ, հեռեկու համար տուանց իրեն զգացնելու».

Հիմա փորձեցէք զուք ձեզի, զազափար մը կազմել սիրոյ վրայ... եթէ կրնաք:

Թարգմ. ՎԱՀԷ Տօք. ՍՍՏԻՔ

ԼԵՌՆԱԿԱՆԻ ՍԸ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՀՍՆԴԵՍԸ

Մեր տան սրահը կեցած՝ կը գիտէի Դինուցը. — Եւսման կամ Դիմաց, անունը ճամբուն որ Զէյթունի հարաւակողմի բլուրին կողէն կը բանի — ստորտի հեղեղահաս դեռակէն բարձրացող շագիններուն մէջէն կը նըշմարէի շատ մ'իշտպաններ ու շրեպաններ, որ փայտ կը բերէին. այդ փայտի բռններուն մէջ գալար ծառեր կ'սրոյէի. ձրդի և գիհի, գէրս անտառաւետ լեռներէն կը բերէին կը արնկէին տներուն առջև. կը անկէին ըօի, ո՛չ թէ հողի մէջ, նորէն բուսցնելու մտքով, այլ պարզապէս չորցնելու համար: Անհամբեր կը սպասէի վախճանին, կը ցանկայի թափանցել գաղտնիքն այդ ծառերուն, սրոնց թիւը 10—12ի հասած էր արդէն. մշտականաչ սաղարթներէն ծաւալող անոյշ բուրումները կարծես դեռ մնացած են ունդացս մէջ. ա՛յնքան զգլխիչ հոտերու մէջ էի որ չէի ուզեր զատուիլ այդ սիրեցեալ ձրդիներէն կամ գի-

հիներէն. այս վերջիններուն կըրիկ չ'այքի պտուղները կը հաւարէի, համասի բնկերներու հետ լո՞ւ թէ Քարս կը խաղայի. հարիւրներով հազարներով կը համբէինք այդ հասիկներէն, որ անհասանում հեշտանքներու առարկաները կը կազմէին:

Վերջապէս հասաւ հանդիսար օրը. ծառուկները զլխիւքը, քով քովի շարելով իրարու յեցուցին: Մեր սրահին վրայ, որ տանիքն էր արիշ տան մը, ձեացաւ գալարալէն տաղաւար մը կամ խող մը. դեռ չէի գիտեր թէ՛ ինչու՞. համար էր այդ տաղաւարը. շուտով սկսած էի նեղել մայրս և ստիպել հարցափորձելով որ ինձ իմացնէր այս տաղաւարին նշանակութիւնը. «Քիչ մ'ալ համբերէ՛, տղաս, եկեղեցիէն վերադառնալէ վերջըլը տեսնես», բառ: Ուրիշ օրերէ աւելի անձկանօք կը սպասէի եկեղեցւոյ կոչնակներուն դանդիւնը լսելու:

Սոդազ-Տէճէյի սարէն կ'երևէր դեզին արևի կասրիկ մը, որ քիչ յետոյ անյայտացաւ. Պէրզինկա, արևելեան լեռը, իր բարձրագոյն սարին վրայ սփռուած վերջալուսոյին ծիրանիներովը կը շողջալար սիգապանձ. դալկահար շողեր, կ'ոսկեզօծէին բարակ ու ձերմակ ամպիկներու կոյտերը: Սուր հովիկ մ'ալ կը փչէր, փողոցներուն հալած սառոյցներուն ցուրտը մարմնի սակորներուն մէջ անցունելու համար: Եւ տհա՛ կոչնակները հնչեցին զոյգ զոյգ: Անմիջապէս վաղեցի, եկեղեցին գացի, սրուն դուռը դեռ դոց էր. հայրս այսքան կանխելուս վրայ գոհ ցոյցեր ըրաւ սիրալիր, բռնեց թևիկէս, դասը տարաւ, դեղեցիկ մեղրամոմիկ մը վառեց, ձեռքս տուաւ: Մտին վրայ թէև ուրախ, չէի կրնար վայրկեան մը զերձ մնալ ծառուկներուն գաղտնիքին անձկութենէն, որ տակաւ կ'աճէր, քանի՛ մտենար ժամը ցանկալի ժամ, ուր պիտի տեսնէի թէ՛ ի՛նչ պիտի ընէին այդ երբեմն կանաչազարդ և այժմ չորացած գիհիները...:

Սաւետարան, Շարական, Սաղմոս,

Տալ, Փոխ զիրար կը զետեղէին. վերջապէս «Օրհնե՛ալք եղերուք»ը լսելի հօրս օրհնեալ բերնէն. վերագարձանք ի սունն: Հազիւ ելայ սանդուխը, մայրս գորովալի մօտեցաւ ու ձեռքս ընտրի լոյս մը տուաւ. տաղաւարին կեդրոնը կոյտ մը յարգ, թուղթ և ուրիշ գիւրալոյց նիւթեր կային. լոյսը դպցօ՛ւր, ըսաւ, դպցօ՛ցի. բոլորաբերը շարուած էինք բոլորս ալ, մեր ընտանիքի մեծ ու պզտիկ անդամները, նաև քանի մը զբայցիներ: Չայները բարձրացան. զմայլունն՝ անպատում, խանդավառութիւնն՝ ընդհանուր և արարողութիւնն ալ սրտագրաւ: Այն պահուն գիտեցի որ Ձէյթունի բոլոր տանիքները կը վառէին, ամեն կողմէ տաղաւարներուն բոցերը կը փայլփլէին և կէս մարած խանձողներ կը նետէին իրարու. յետոյ, բոցը քիչ քիչ նուազելով, ծառերուն բուները հաստ մոմերու նման վառելէ վերջ, կարմիր ու տաք մխրակոյտ մը մնաց տաղաւարին տեղը, ոսկից գեռ լոյսեր կը ցոլային. այդ բոցերու վրայէն քանի՛ քանի անգամներ ցատքողներ եղան. ես ալ փորձեցի, բայց ծնողքս արգելք եղան:

Իրիկուն եղաւ, մխրակոյտը նոս՛մ սառեցով մը ծածկուեցաւ. մերթ ընդմերթ, մահամերձ նշոյլներ կ'երևէին կը մարէին. մութը կոխեց հեազնատէ, մխրակոյտն ալ պաղեցաւ, ամեն ոք իր աունը քաշուեցաւ, Տեառներնդառաջի հանդէսը կատարած ըլլալուն երբին խնդամտութեամբ առի:

Ներս մտանք, սեղանը պատրաստ էր. ընթրիքէն վերջ՝ շարուեցանք վառարանին շուրջը, դարձեալ սկսաւ հեշտալի խօսակցութիւն մը: Մայրս, որ կրօնային աւանդութիւններն ու ծէսերը լաւ կը պահէր, առանց սակայն ըմբռնելու անոնց իսկն ու ինչո՛ւն. վրայ բերաւ, առանց իմ հարցումներուս սպասելու: «Տղա՛ս, տեսա՞ր ծառակներն ի՞նչ եղան, Աստուած ամեն տարի ուրախութեամբ հասցընէ այս օրուան»: «Ինչո՞ւ վառեցինք ծառակները» հարցուցի, լսեց ինք. հայրս

որ քիչ անգամ խօսքի կը խառնուէր, մանուկ մտքիս գոհացում՝ մը տալ խորհելով ըսաւ. «Այսօր Տեառներնդառաջ է. մանուկն Յիսուս, որ մեր Քրիստոս Փրկիչն է, այսօր տաճարը տարին, ուստի եկեղեցին ալ հանդէս կ'ընէ, մոմեր կը վառէ. իսկ քրիստոնեայք, իրենց հանդէսներն իրենց աներուն մէջ ալ կը կատարեն. այսպէս, այդ ծառակները վառեցինք ի նշան մեր ընդհանուր ուրախութեան»: Մութ եկաւ խելքիս այդ խրթին բացատրութիւնը, բայց ի՞նչ ընէի. խօսողը հայրս էր, հասկցողի մը պէս գլուխ երեքցուցի: Այնուհետև, երէց եղբայրս յարեց. «Տանեաց վրայ կրակներ վառելու սխրոյթը շատ հնաւանդ է. հայոց բնապաշտական շրջանին մէջ ունեցած տեսակ մը կրակի արարողութիւն է, որ կ'ըլլար ի պատիւ դիցարևուն, լուսին, աստղերուն և հրեղէն էակներուն»:

Այս հանդէսն եղաւ զնայ, բայց ո՛չ տարապարտօց. Յիսուս, տաճար, քրիստոնեայ, բնապաշտ, և այլն, բառեր ընտանի դարձան ականջիս. սկսած էի արդէն ըմբռնել թէ՛ մարդ իկ կը սիրեն ստեղծել հանդէսներ, կեանքի մաղձերը քիչ մը քաղցրայնելու համար. իսկ ես, իրարու յաջորդող այս ածական օրերուն յաճախակի կրկնութիւնը կը փափաքէի:

Ի՞նչ իմաստուն կարգադրութիւններ. ձմեռուան ձանձրաութիւթ օրերու հասումը գիւրին և կեանքը տանելի ընելու համար՝ ժամանակին խորհում և տնօրինուած տօները կը թողուն խոր սպասարութիւն մը, որ անշնչելի կը մնայ մինչև գերեզման: Տօները մանուկ հատակիս անհրաժեշտ պէտքերէն մին կը համարէի. քանի մ'օր վերջ, առաջարկելի մօրս որ դարձեալ մամ վառել տայ մեր սրահին մէջ. Ժպտելով ըսաւ. «Տարի մը վերջը»:

ՀԱՅԿ-ԼԵՒՈՆ

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

(Ե Ա. 40)

Որտաւորը վանքին գննէն գորտ ելաւ, բնիս ճամբան որ շիտակ կը տանի Ջէյթուն. ճամբուն երկայնութիւնն ու սօթածաւ ման տարը չէր գգար ինք, մէկ զգացում մի այն ունէր. իր վերջնապէս կարտուերուն զգացումը. կը խորհէր միայն թէ՛ ի՞նչ պիտի պատասխանէր հարցումներուն, գորտ իրեն պիտի ուղղէր Սալիհ բաշա. թէ ի՞նչպէս տոտիկաններուն ձեռքը պիտի մատնէր ինք. զինք, թէ, վերջապէս, ո՛ւր պիտի տարուէր ...: Պոյս տարուել չէր փափարէր, կարծես հոն բան մը կար որ միշտ կը նեղէր անոր հոգին. մտքն անցեալ մը, գազանիք մը թաղուած էր անոր այդ գովամտութեան մէջ. ինչո՞ւ թողեր էր Պոյս, ու կիլիկիա եկեր հաստատուէր էր, ո՛չ ոք զիտէր. և սակայն վէթանուրի շարունակեց իր ճամբան մինչև որ հասաւ բնիկներու մ'ստորոտէն բխող աղբերակի մը բով, ուր, յայնտ ու մասսանջ, պէտքն զգաց պահիկ մը հանգչելու. պայտասիքը գրաւ գետին, կոնակը տուաւ հաստ բունին, տիպը ջուրը խմեց պաղաւ պաղաւի, գլուխը բուաց ու եղբքն ընկազմանած, խորունկ երկայն ա՛խ մը քաշեց սրտին խորքէն. վայրկեաններով յառած միաց հոսուն ջրերուն, փորձեց ինքզինք մտնալ, կամ գննէ, անտարբերութեան տալ, բայց իր ձեռքակալուելու հաւանականութիւնն աչքին առջև անկուած էր, ուրաւականի պէս, և տեսակ մը ստրուաւ կ'աղղկը մինչև անոր հոգիին խորը. արեակներուն մըմունջին և տերններուն շշուշին հետ կ'երազէր խոնջ ու մուր ուղեորը, երբ պիտան վերև գտաւ սպիտակ հագուած, սպառազէն ստիկաններու խումբ մը, որուն տերը մտածեցաւ իրեն ու ըսաւ.

— Էֆէնտի, ո՞վ էք և ի՞նչ գործ ունիք հոս, սրկիկ կուգաք և ո՛ւր կ'երթաք:

Անմիջապէս կը շտկէ զիրքը, առանց վարանման կը պատասխանէ.

— Որո՞նց առջև կը գտնուիմ:

— Մենք Զորանոցն ենք. Սալիհ բաշայի կողմն Ս. Աստուածածնի վանքը զրկուե-

ցանք, կպիտիպտու վանահայրէն պահանջնցինք Պոյսեցի փախտտանիսն վարժապետը, որ գնո նար եկած է Այնթապի կողմն:

— Ի՞նչ պիտի ընէք այն Պոյսեցին:

— Ի՞նչ զիտնէք, բաշային հրամանն է, հիմայ կարգը կը կրննեքուն ու վարժապետներուն եկաւ, անոնք կը փնտտուին:

— Ես'ա աղկի, կ'ըսաք սրբինն հանդիշեա կ'ընամ ձեզ առաջնորդել:

— Ի՞նչպէս ...:

— Պարզապէս, դուք գտար ձեր փնտտորը, կը մնայ ինձ գտնել իմ փնտտածը:

— Դուք զո՞վ կը փնտտէք:

— Սալիհ բաշան, շատ կարեւոր գտգտներն պիտի հաղորդեմ անոր:

— Բայց ի՞նչպէս գիտէք որ մենք գտած բլլանք մեր փնտտածը:

— Ձեր խօսակիցն է, գեա չը հասկցա՞ք:

— Օ ... Պրո՞վօ ...:

Ամենքը մէկէն խենդի պէս պոռացին.

— Օ՛ն սրբինն, հայրենակից, ելէ՛ք նայինք շատ ուշ է ժամանակը:

Ետեով ոտքի ելաւ, պայտասիքը նետեց ուսն ու ինկաւ սպիտակ խումբին առջև. քիչ մը վար, ձոր մը կարեցին, անցան միւս կողմն ու Զորանոցի ճամբան բունեցին:

Իսկ եպիսկոպոսը գեա խոշոր քայլերով կը շտիւր տախտակամանին երկայնութիւնը, մտաբերելով յաճախ Եարփուզի մէջ իր բնտանիքով ձեռքակալուած Երիտասարդը, ուրուն, կ'ըսէր ինքնիրեն, ձեռքակալումը շատ սուղի պիտի նսաւր հայրենիքին. շատ մը կենտական ծրագիրներ պիտի ցնդէին, ձեռնարկներ պիտի վիժէին անով ու արինալի տոսմներու տեսարանը պիտի պարզուէր: Ձեռքը ձուկալին տարաւ, կանգ առաւ ու սկսաւ խորհիլ միջոցներուն վրայ որով կարելի կամ զիւրին կ'ըլլար այն Երիտասարդն ազատել զինուորներուն ձեռքէն, ու յետոյ, լքուած և յուսակտուր, թաղուեցաւ միկնոյն սև ու սրխուր տարտամին մէջ, խորտոյց, ջախջախ, ու սրտաբեկ. ամեն բան վերջացած էր: Ուստի, շուարած ու կատաղի, ինքզինք կ'ուսաւր, մերթ իր ապիկարութիւնը կ'ողբար. իր սեզմ ու փափուկ զիրքը կը գտապարտէր ու մերթ Ջէյթունի լեռնականներուն անհոգութիւնը, չըսենք միհերտուութիւնը կը գտապիտէր: Յանկարծ սթափած, թօթուց թրմ-

բիրը մտեւ թեան, կարծես զիւս մ'ըբած, ընդոտ ելաւ. «կ'ըլլայ», պոռոյ: Բայց քիչ վերջ ակնթարթի մէջ, համակերպողի մը ձայնարկութեամբ. «Ի՛նչ կ'ըլլայ» բացապանչեց ու տեղը նստաւ. այսպէս կը մտմտար ու ման կուզար մտախալով. «Անիրաւ շուն, ժամ մը չ'անցած, զինւորները հասուցեր է վանքը, Պոլսեցին կ'ուզէ, չկրցաւ համբերել մինչև իրիկուն»:

Թողունք որ զինւորները տանին վարժաժապետը բաշային, եպիսկոպոսն ալ տարուի իր խորհրդածութիւններէն, ու գանք հակիրճ մը պատմելու վերջին արկածներն այն Երկտասարգին սրուն վրայ կը դառնար եպիսկոպոսին ուշն և ուրուշը:

Սեւ ծովէն կ'ուզար անի, Գում-Գաբուի Յոյցէն շարաթ մը վերջ մեկնեցաւ Սամսունէն. քանի՛ քանի՛ քաղաքներէ անցաւ անվտանգ, չէրբէզ ու թաթար կառավարներու ձեռքերուն յանձնելով իր մատաղ կեանքն ու անազարտ պատիւը. Սեբաստիա ծպտեալ պտըտեցաւ հինգ օր, անձնուէր խումբեր կազմակերպեց հինգ օրուան մեջ, յետոյ փնտուեցաւ, փախաւ, Մանճրըզլի Բանձարեան Սրբազանին առջև, կիլիկիոյ Գոզլաշ Տէճէներուն հետ հաւատարմութիւն ու եղբայրակցութիւն սխտեց ու կնքեց. կիւրիսի մէջ շորեպան Նուրբէկի տանն սպաստանած, երեք զիշեր նոյն քաղաքի երկտասարգութիւնը խրախուսեց ու պատրաստեց, արշալուսով թողուց քաղաքն ու երկու ժամուան հետուոր Գավազ գիւղին մէջ քուրդ հօտապետի մը վրանին մէջ աւալընշականութիւն վայելեց. գիշերային գնացքին մէջ քանի մը հայ գիւղերու հանդիպելով գիւղացիները պատրաստեց, և վերջապէս, յաջողեցաւ մանելու իր կարաւանին հետ Եարփուզ, Չէթունէ, տասը ժամ հեռու հայաքնակ գիւղը, ուր հիւր եղաւ տանը Տ. Մկրտիչեան Գրիգոր աղայի, վախիտ ու խորամանկ, բարեպաշտ ու շահամոլ խառնըւածքով հայ մը: Սակայն երկու խօզ պրովներ, ըսգի տարագով սպառազինուած անփորձ երիտասարդներ, կանխելով իրմէ առաջ մտան Եարփուզ ուր և բանտարկուեցան. երկուքն ալ — ինչպէս իրենք զիրենք հոչակած էին իրենց հարցաքննութեան մէջ — իբրև հետուորդ ու թիկնապահ Չէթունցի Երիտասարգին որ Ներկայացուցելը կ'ըլլար Հնչակեան

կուսակցութեան ի կիլիկիա:

Միւսիրը փութով խաղարկութիւնները կատարեց, Տ. Մկրտիչեանի տանը մէջ ճամբորդին սնտուկներուն մէջէն հանեց զատեց շատ մը ձեռագիրներ, արձակ ու ստանաւոր, հեղինակութիւն ու թարգմանութիւն, զորս ծրար մ'ընելով զիշերով երկու աստիկաններով զրկեց Չէթուն Սալիհ բաշային, աւետելով այս վերջնայն թէ յաջուած էր ինք ձերբակալելու ահագին հրօսախումբ, մը ուրան Պեալ — կը գրէր — Ռուսահայ մ'է, գազանի հրահանգներով ու նենգամիտ գիտուններով եկած՝ այն կողմերը. տեղեկագրին մէջ շեշտեց անհրաժեշտ պէտքը զրկելու Եարփուզ Նոկատ մը ստախկան-զինւորներ, յիշեալ խորհրդաւոր ու անձանթ Երիտասարգին: ու անոր հետեորդներուն փոխադրութիւնն անարգել ի զործ գնելու համար:

Խաղարկութիւն էն վերջ սիրտ չբրաւ ձերբակալելու Երիտասարգին ու անոր եղբայրը, նիսասի ունենալով անոր ընկերուհւոյն մայրական ամենափափուկ կացութիւնը, մինչև իսկ անստով թուրք ազաներուն յորդորանքին, ազատ արձակեց նաև միւս երկու հայ երիտասարդները, սպասելով որ նոր հրահանգ մը հասնի Չէթունէ, ուր զեռ բաշան զործ ունէր: Ամեն գիւղացի բաշուած էր իր խրճիթը, միւսիրն ալ իր քանի մ'արբանեակներով զիւղին եզերքի նշանաւոր աղբիւրին առջև նստած էր: Գիւղը բոլոր կը հանգչէր, բաց ի Տ. Մկրտիչեանի տնէն, ուր չեմ գիտեր ի՛նչ գազանի բան կը դառնար: Մութը քիչ քիչ թանձրացաւ, ամառուան սյարդ երկնքի մը մէջ, մութ կապուտակ լեռներուն պողաթէն վեր կ'ենէր լուսին մը, հանգարտ ու զով նշոյլներ սքիւնելով այլիներուն վրայ ու մացաններուն մէջ: Գիշերուան առաջին պահն անցաւ, գիւղը բովանդակ լութեան մէջ թաղուեցաւ:

Մի տիրը դաբանակալ արջի մը պէս չէր հեռանար աղբիւրէն, ծիսխոտ փախցընող Չէթունցի շորեպաններուն անցքը խափանելու համար. իսկ իրեն արբանեակները 30 քայլ անդին հեռացած, ծառերու տակ, առուակներու եզերքն ընկած պառկած, առաջին բռնը կը բաշէին:

Աղբիւրին առջևի փարուած խոշոր քարին մէջ պղրգածայն թափող ջուրին կարկաշը

չկրցաւ խափանել ձայնը ստեղծուն երկու
անձանօթներու, որոնք ազրիւրին հիւսիսի
կողմէն վեպի շրջակայ այգիները կ'առա-
ջանային արագ արագ. մետիրը վեր կեցաւ
զիտեց, հետուն չկրցաւ որոշել զվերերը,
կատկածեցաւ, արբանեակներուն ձայն առաւ
անյայտ, մինչդեռ երկու ճամբորդները
կը շտապէին իրենց գնացքը:

— Կեցէ՛ք, պոռաց, եթէ ոչ կը կրակեմ:

Մտիկ ընող չեղաւ. միենայ շտապը:

Ազգաբարձութենը կրկնեց, երեքի՛նց, և
վերջապէս իրենց տեղերը գամեց կեցաց
այն երկու անձանօթները: Շուտով վազեցին
չորս արբանեակներ, բռնեցին միւտիւրին
ստշե բերին զանոնք:

— Ո՛վ էք, ո՛ւր կ'երթաք, հարցաց անոնց.

Երկուքն կրտսերագոյնք, ստաջ նետուն-
ցաւ.

Պապիկ բաշային տղան եմ ես, բռաւ.

Լուսնի նուազ նշոյլներուն մէջէն կը
նշմարտէին միւտիւրին երկու հրացայտ աչ-
քերն ու երեսները, որոնք կ'ուզարտէին
այն անտիկոննելի յայտնութեան վրայ որ,
եթէ ճշմարիտ ըլլար, միւտիւրին բազը
պիտի շինուէր, բարձրացնելով զանի Պայ-
մագամութեան և թերեւ Բաշայութեան.
վանդի այն ժամանակները կը փնտաւէր
Զէյթունի Պապիկ բաշայի սրվին, որուն
համար կ'ըտուէր թէ Ապճէ-Տալի քուրդ
սպտամբաց հետ գոցած խառնուած էր և
թէ՛ Զէյթունի լեռնականներուն ու ստանց
միջև զինակցութիւն մը հաստատելու նպա-
տակով այդ կողմերը փութած էր: ...:

— Ի՞նչ բսիր, Պապիկ բաշային տղան ես:

— Այո՛... ո՛չ... Ս. Էֆէնտիին եղբայրն
եմ... և սիտա թոթովիլ:

Առանց միան ալ հարցաւորք ընելու՝
հրամայեց իր արբանեակներուն սանիլ զա-
նոնք զիւրին կառավարական պաշտօնատան
սխռաներէն մէկուն մէջը բանտարկել այն
գիշերը: Բայց յանկարծ վրայ հասաւ, կայ-
ծակի պէս յարձակելով արբանեակներուն
վրայ Երիտասարդին եղբայրը, բռնեց մի-
տիրը, հագտատփն ու զէնքերովը նետեց
զայն ազրիւրին ստշեի քարէ աւազանին մէջ:
Ազգականները բարձրացան, խառնաձայն ժը-
խոր մը, զէնքի պայթումներ, իրարանցում-
ներ, և գիւղը բովանդակ արթնցաւ. հայ

ու թուրք, վազեցին հասան վեպին վայրը,
տեսան վիճակը միւտիւրին որ այն պահուն
ջրէն հանուած կատար մը նմանութիւնն
առած էր, փրփրած ու մաշկին այն վիշերը
մինչև առաւօտ, գիւղը պաշարման մէջ գնել
ստաւ, որպէս զի չփութին իր գերիները:

Արդ, բաշան զրկեց պահանջուած ջուս-
արը, 12 զինուոր, 1 խմբապետով, 1 յիւ-
նապետով ու 1 հագարապետով, որոնք
յաջարդ օրն առաւան արեւագին մտան
Եսրփուզ, պաշտօն՝ սենեակով ընդ հսկա-
զութեամբ փոխազրելու Երիտասարդին, իր
ընտանիքն ու կարծեցեալ հետերգներն ի
Մարաշ, զգուշանալով զանի անցնելը Զէյ-
թունի շրջակայքէն, ուր ո՛չ նուազ հաւա-
նական էր պայթելը կլքերու, որոնք մա-
նտանից, պատաստով թանաւարած ան-
մեջ մանկիկներուն ջերաջեր յիշատակը
գերազրգուած էին. կիրքեր, զորս գոպել
անկարելի պիտի ըլլար լեռնականներուն
սպտամբ ու վրէժնոյր հագնեալներուն մէջ,
քանի որ Մալիհ բաշա, փոխանակ կրակը
մսխրելու, աւելի կ'արձարծէր. կարծեցեալ
աւազակներ պահանջելով, բռնիներ, ու-
սուցիչներ և ուրիշ կարեւոր Հայեր ձերբա-
կալելով ու արտօրելով, և այս՝ Գում-Գա-
բուի Յոյցին յաջորդող շարաթներուն մէջ...:

(Շարունակելի)

ՄԱՅՏԻՈՒԹԻՒՆ

Իլ-Օպէտի և ուրիշ տեղերու զրա-
տումէն վերջ Մահաթի ուշադրութեան
առարկան եղաւ իր բանակի կազմա-
կերպութիւնը, զիտէր որ կառավա-
րութիւնը սակն պարագայի մէջ, հա-
կառակ խել մը ահարեկող պարտու-
թեանց ու վհատեցուցիչ զժուարու-
թիւններու պիտի ջանար իր բարոյա-
կան վարկը բարձրացնելու ստանելիով
իր ձեռքէն ելած հողերը: Բնական մէկ
կողմէն իր ուժը ամբասանելու կ'աշ-
խատէր, միւս կողմէն հոգեշունջ քա-
րովներով ու հայրապետական զրերով
կը հրահրէր վեհերոտ համոզումը. նա-
բարձարժ մոլեռանդութիւնը. շարու-

նակ ճէհատ կը քարոզէր հաւատացեալներուն, մեծ՝ վճռական հակառակմարտը յորմէ իրենք անմիջապէս յաղթական պիտի ելլէին, մտաւրտ պատկերացնելով անոնց: Ով որ ճէհատի մտանակցէր անաստ էր, պատերազմի մէջ մարգարէին օրհնութիւնը՝ ճեկնարի յաւերժական երանութիւնները անոր համար էին. իսկ ան որ ձեռնպահ մնար՝ վա՛յ այնպիսոյն, ընչից կոզոպուտ, անէժք, մահ և մահէն անդին՝ Գեհէնի անշէջ կրակն էր անոր յաւիտենական ժառանգութիւնը:

Մեծաոտնակ ճիւղայա մը հազած, անպաճոճ և յարգազոյն զօտի մը մէջքը, մարմնաշեւոյ փաթթոցով մը չըջապատուած՝ Մէքքէի շնորհարարը գտակը գլուխը, անձնամուտայ խոնարհամտութեամբ մը իր արբանեակներուն կը ներկայանար հօտից տիպար հովիւը, աստուածսիրութիւն, սուրբ գործոյն նահատակուիլ ու աշխարհի ունայն փառաց ուրացութիւն քարոզելով անոնց: Գլխովին տարբեր էր սակայն ներքը՝ բնակարանին մէջ, աաշքանաթով և ժառանգական ցոփակեցութեամբ կ'ապրէր իր յարկին ներքև շոալլօրէն կահաւորուած, ուր ալ ըլլար: Ինչպէս ամէն Սուտանցի ինք ալ գերազանցօրէն կնամուլ էր, և երբ կ'իներ կամ մանկամարդ ազնկունք առեանդուէին՝ սեամբթ կամ ճերմակախոտն՝ գեղեցկագոյնները նոյնհետայն կը զասակարգուէին իր հարէմի մէջ, արդէն բազմաթիւ բեռւորուած:

1883 Սեպտեմբեր ամսոյ սկիզբները, անպիացի Հիքս փաշայի հրամանատարութեան ներքև արշաւախումբ մը կրկին խարթումէ ճամբայ ելաւ Մահաթի վրայ յարձակելու պաշտօնով և երկամսեայ ճամբորդութենէ վերջ՝ Գօրտօֆան կը հասնէր: Նոյեմբեր 4ի նախընթաց երեկոյ բանակած էր Իլ-Օպէտի արևելեան հարաւակողմը Քաշկէլ անուանեալ անձանօթ վայր մը: Զօրքերը, սրոնք

արդէն շատ չարչրկուած էին թուրանալ սկսան. պաշարի պակասէն աւելի կը նեղուէին ծարաւէ, իրենց զարիպայէն քիչ մ'անդին անձրևի հեղեղէն կազմուած ջրհոր մը կար թէպէտ, բայց չորս կողմէն կարկրաոտնան ոտմբ կը տեղար, ու իտեղճ գօրքերը՝ ծարաւատանջ, երազոտ կը հոռաչէին. «Մտար ֆէ՛ն, եա՛ սիտթի Զէյնէպ, իլ վազթի վազթիք»: Մ'որ է Գահիրէ, ո՛հ, ո՛վ Զէյնէպ խաթուն, հիմակուկ է մեզի օգնելու տակնը:

Յաջորդ աստուն թշնամույն վրայ յառաջխաղաղութեան հրամանը տրուեցաւ, առանց գիտնալու թէ ո՛ր է թշնամույն բանակատեղին, մէկ խօսքով ասանց տպահով առաջնորդութեան՝ կանխապէս ծանօթանալու այն անձանօթ վայրերուն ուր կէց պիտի անցըւէր: Թշնամին շատ մօտ էր զրթբազդաբար. բանի մը միտն անդին՝ առնուազն հարիւր հազար մահախոցիւր զարանակալ պահաւորուած էին թանձրախիտ անտառի մը մէջ, և այն ինչ եղիպտական ոգորմելի տրչաւախումբը՝ անհեռատես՝ կարօրէն կը յառաջանար, անգամ մ'ևս յանկարծական յարձակում ըրին անոր վրայ և առանց մեծ կորուտտի ջարգուբուրդ ըրին զայն: Եւրոպացի զօրապետները և ափ մը թուրք հեծելազօրքեր միայն ջանացին դիմադրել բազմաստեան ասանածիւս ծառի մը տակ ապաստանած, բայց ամեն կողմերէ պաշարուած ըլլալով՝ աճեքն ալ սրախողխող եղան: Հիքս փաշայի և Պարոն Սէքքէնտօրֆի գլուխները կտրուեցան ու Մահաթի գրկուեցան: Ի բաց առեալ երկու երեք հարիւր զօրականներ սրոնք գիակներու շեղջակոյտին տակ սմբած մահուան սարսուռը ունէին. մնացեալը ամբողջ սրոյ ճարակ եղած էր:

Դիւրին է երևակայիլ բարբարոս հակառակորդին սանդարամէտական հրճուանքը այսպիսի յաղթութենէ մը, որ ալ պատահական յաղթա-

նակ մը չէր, այլ աստուածային կրօն-
քը, մարդարէին բարեխօսութիւնը,
Մահաի երկրային անգհովանին, ու
Մահաի անունը՝ այդ օր՝ մինչև եր-
կինք բարձրացաւ:

Այն արշաւախմբի եղերական բը-
նաճնջումէն վերջ Մահաին հասկցաւ
որ Սուտան ամբողջութեամբը իր
ձեռքն անցնելու էր. ինչ մեծ փառք,
թէպէտ, կզգար որ զայն աշխարհա-
կայելը գեռ ժամանակի կարօտ էր
և թէ իր հակառակորդը նուաճելու
չափ տկար ուժ մը չէր:

Եւ իրօք, եպիպոսական կառավո-
րութիւնը, այն աստն սղլապետը Նու-
պար փաշայի նախարարութեան ներ-
քեւ, իմանալով իր կրօն ձախողու-
թիւնները՝ կորսօն փաշան ինգհա-
նուր վարչակալ կարգեց Սուտան խա-
զաղեցնելու համար: Կաւ բնորութիւն
մ՛է արգարեւ որ կ'ըլլուէր, զի կոր-
սօն, իր արգարակորով վարչութեամ-
բը, առատաձեռնութեամբը շատ սի-
րելի հանգիստացաւ ամենուն քով, ու
էր բոլոր ճիւղը թափեց մինչև վերջին
չունչը, պարտքին զոհուելով իսկ:
Սիսոս որ շատ ուշ էր բացայտուեալ
հեղին գէն՝ ամբարտաւէ մը յարու-
ցանել և ինչպէս ուրիշներ՝ զոհուեցաւ
կորսօն — ըստ ոմանց երկրին շահա-
դէտ քաղաքականութեան գոհը —
լսկ իրմէ առաջ գործուած սխալնե-
րու բերեամբ, ապտամբութիւնը ըս-
կիպքի օրէն՝ լուրջ և հեռատես կաղ-
մակերպութեամբ մը շախմատուած
ըլլալով:

Կորսօն, Սուտանի պատմութեան
մէջ, ծանօթ և պաշտելի գէնք մ՛է:
Բայց ոչ նուազ ծանօթ՝ ոչ նուազ
սիրելի է գէնքը անոր որուն սպի-
տականը վայրկեան մը աշխարհ ըզ-
մայլեցուց, և որուն քաջահմուտ ծա-
նօթութեանց շատ բան կը պարտի
Սուտանի կրկին գրաւումը: Սուտանի
ճշմարիտ հերոսն է ան, համբերու-
թեան, անուկ խորամանկութեան հի-
անալի ախպար մը. օրինակէն՝ որբան
ալ անհաստական խոշոր դաս մը կա-

բող են առնել ոչ միայն անհաստներ
այլ և ամեն անոնք որոնք բարբառ-
սութեան լուծին տակ կը հեծնն գեռ:
Մինչդեռ իրեն բազմակից ստորակայ
հասարակ զերինքը, կարճատե տա-
ռապանաց ա՛լ չկարենալ ասկալով՝
յուսահատ ինկած են չլիթային տակ,
ինք հրամանատար, զիրքի տէր մարդ,
փաշայութեան արժանացած բար-
ձրաստիճան պաշտօնեայ՝ տարիներով
զիսցած է համակերպել հրամայուծ-
բան և իր անվհատ ասկունութեան
չնորհի՛ւ արհամարհած է բանտը, շրղ-
թան, մինչև այն օր որ վերջապէս իր
ազատութեան արշարայսը ծագեց: Ու
այս պահուս, հայրենիքի ճերմակ եր-
կինքին տակ, հանգստեան ամառվա-
չակի կոչուած, իր սիրելիներու զրգ-
ուանքին տարակայ երէկուան մեղա-
մողձուտ վերջուշամովը կ'ապրի նա,
որ անցեալ տարի ապրիլ 13ին, Սէր-
տարի Պէրպէրի մէջ յայտնական շր-
ջազայութեան տոթիւ, Սուտանցի
զօրքերը՝ խանգավառ սգևորութեամբ
մը:

«Էս հօ՛, էս հօ՛, Սալալին» գոչե-
լով կ'ողջունէին:
(Շարունակելի, Ի. Օ.)

ԼՐԱՅԱՂ

Պաշտօնական շրջանակներու մէջ կը
հաստատուի թէ՛ Չարը յիսուուորութիւն
ունի յառաջիկայ ծմբան եւրոպական վե-
նետուով մը գուճարել արեւելեան խնդրոյն
և մասնաւորապէս հայկական և մակեդոնա-
կան խնդիրներու վերջնական լուծման:

— Սուլթանը իրաւէյով մը հրամայած է
որ Բ. Դրան և Հայոց Պարլիամենտանի
միջև եղած առկախ խնդիրները լուծուին
անյապաղ: ԹԱՆ

— Նախագահ Քրուկէրի անգլիական
պահանջմանց ըսած վերջին զիջումներուն
վրայ, հարաւային Ափրիկէի մէջ խաղա-
զութիւնը կրնայ աղանդուած նկատուիլ:

— Չարը Բրէնս Լուի Նաբօլէոնի ծնն-

վիան սարեղարծին առթիւ հետևեալ նշանակալից մաղթանքը ուղղած է. «անկեղծօրէն կը փափագիմ որ իւրաքանչիւր օր զձեզ աւելի մօտեցնէ այն ցանկալի օրուան ուր ձեր բողոճահօրները, պիտի իրականանան» :

— Դ. Լը վասէօն, կարևոր ուսումնասիրութեան մը մէջ բազմատուփիւն մ'ընկելով Եւրոպայի զանազան տէրութեանց արդիւնաբեր ուժերուն միջև, անոնց հետեւեալ հողային տարածութիւնն ու բազմամարդութիւնը կը հաստատէ, մէկտեղ առնելով նաև իրենց գաղութները :

	Տարած.	բնակիչ
Անգլիա	29 միլ. ք. քլմթ.	380 միլիոն
Ռուսիա	20 " "	129 " "
Ֆրանսա	4 ու կէս " "	72 " "
Հոլանտա	2 " "	31 " "
Սպանիա պատերզմէ առջ.	1 " "	25 " "
Ալմանիա	3 " "	55 " "
Փօթուգալ	2 " "	10 " "
Պելճիգա	2 " "	14 " "
Տանըմարգա	1/4 " "	2 " "

ՔՈՒՐԻՔ ԵՒ ՊԱԼՔԱՆ

— չայոց Յեղափոխական Գաշնակցութիւնը մակեդոնական յեղափոխական բարձրագոյն կօմիտէի հետ միացած՝ եւրոպական Գահլիճներուն ներկայացուց ազգու և յուզիչ յայտարարութիւն մը, ուր բոլոր կերպով կը բողոքէ յաղաղութեան չամստողովի այն անիմաստ որոշման դէմ որով՝ չայկական և Մակեդոնական խնդիրներն ի բաց վտարուած են վիճարանութեանց յայտագրէն :

— Զէյթունի առաջնորդ Գեր. Տ. Կարաօեա եպիսկոպոս վերջերս շնորհկալութեան նամակ մ'ուղղեր է առ Տիար Պետրոս Կարապետեան, ներփակեալ ցուցակով մը, ուր նշանակուած են անունները 1100 սովկեղոց որոնց բաշխած է Գահլիքէն դըրկըւած 22 օսմ. ոսկևոյ գումարը, ըսենք Չական դրուշ իւրաքանչիւր անձի : Նորին Գերապատուութիւնը՝ խմբագրութեանս ալ գրած է նամակ մը որուն մէջ կը նկարագրէ հայրենիքի տազնապալի կացութիւնը, չանդիսիս միջոցաւ կոչում ընկելով արտասահմանի ազգայնոց մարդասիրական

զգացումներուն, իրենց նպաստներուն լուծման կարելի եղած փութով հասցընելու համար ի Զէյթուն, ուր սովը սոսկալի աւերներ կը գործէ... :

— Զէյթունէն կը տեղեկագրեն որ վերջին ընդլիմադրութեան ժամանակ քանդուած Զօրանոցին վերաշինութիւնն աւարտած է և, իբր թէ այդ առթիւ աղօթքներ ուղղուած են Սուլթանին արևշատութեան համար :

— Իզմիրէն վերջին պահուն ստացանք Ինճանու և Պատկաուելի Մամուրեանի գրական գործունէութեան յորէլեանը տօնելու համար կազմակերպուած Կերք-Յանճահիւմբին յայտարարութիւնը որուն հրատարակութիւնը դժբաղդարար, պարտաւորեցանք յաջորդ թիւին յետածգել :

Կերքնական կրթարանի ամսվերջի հարցաքնութիւններն սկսան Յուլիսի 17ին և վերջացան 21ին : Հարցաքնութեանց ներկայ էին աշակերտաց ճեղներէն ոմանք և յիշեալ հաստատութեան համակիր բարեկամներու մի ժամը :

Արձակուրդներն սկսած են արդէն Լէպիտի սեկն մինչև Սեպտ. 1 :

ԿԱՐԵՆՈՐ ԱՅՐ

Կը պարտաւորինք կրկնակի խնդրել որ մեր Պատ. բաժանորդները, Եղիպատսի և արտասահմանի, հաճէին փութացնել իրենց վճարումները :

Le Gérant, J. MUNIER